Ալեքսանդր Ծատուրյան

Մի՛ լար, բլբո՛ւլ

Մի՛ լար, բլբո՛ւլ, քեզ մի՛ տանջիր,
Որ փոթորիկն անիրավ
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր
Թփից պոկե՛ց ու տարա՛վ . . .

Կանցնեն օրեր . . . Կըգա կրկին
Մի նո՛ր գարուն վարդաբեր .
Եվ մոռացած քո վիշտը հին,
Նորից կերգես վարդին սեր:

Բայց վա՛յ կյանքի այն խեղճ երգչին,
Որ վաղաժամ որբացած,
Յուր սիրելի, խոսուն վարդին
Ցուրտ հողին է նա հանձնած . . .

Երգչի համար գարուն չի՛ գա,
Ո՛չ նա նոր վարդ կըսիրե .
Նա պետք է լա, պետք է սրգա,
Մինչ հավիտյան կըլռե . . .